

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ 5 Օգոստոս 1994, Ս. Էջմիածնայ Տաճարին մէջ, Ամենապատիւ Պատրիարք Հօր ձեռամբ, երեք Սարկաւագներ (Արթօ Սրկ. Գարանեան, Պօղոս Սրկ. Պոկտան եւ Սարգիս Սրկ. Սարիբեկեան) ձեռնադրութեան քահանայ:

Խարտաւիլակն էր Գեորգ. Ս. Սեւան Եպս. Ղարիպեան, առընթերականերն էին Հոգշ. Ս. Բագրատ Արդ. Պուրմէքեան եւ Հոգշ. Ս. Գուսան Վրդ. Ալմանեան: Ընծայեալները ծնրագնաց յառաջացան Էջմիածնի եկեղեցիի մուտքէն մինչեւ դասը, ուր արարողութեան աւարտին, արտասանեցին մեր եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան հանգանակը: Շաբաթ, 6 Օգոստոս 1994ին, Ձեռնադրութեան Խորհուրդը կատարուեցաւ տպաւորիչ հանդիսաւորութեամբ: Օրուան տօնն էր Յիշատակ Տապանակին Հնոյ եւ Տօն Նորոյս Ս. Եկեղեցւոյ: Ժամարարն էր Հոգշ. Ս. Կոմիտաս Վրդ. Շերպէքեան: Ընծայեալները, ի նշան աշխարհի հրաժարման, ձեռնաքարձ ժողովուրդին

դառնալէ ետք, ձեռնադրութեան երկրորդ քաժինն մէջ ընդունեցին քահանայական զգեստաւորման օրհնութիւնը, տրւութեան ուրոյն աղօթքներով:

Օծման խորհրդաւոր ու նուիրական պահուն, Ձեռնադրիչ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, բարեշնորհ Արթօ Սարկաւագ Գարանեանին անուանեց «Տէր Դանիէլ». բարեշնորհ Պօղոս Սարկաւագ Պոկտանին անուանեց «Տէր Եգրաս», եւ բարեշնորհ Սարգիս Սրկ. Սարիբեկեանին անուանեց «Տէր Զաքարիա»:

Ամեն. Պատրիարք Սրբազանը խօսեցաւ բովանդակալից քարոզ մը: Ապա ընծայեալները ստանալէ ետք իշխանութիւն մատուցանելու Ս. Պատարագ, իրենց անդրանիկ օրհնութիւնը տուին ժողովուրդին, եւ «Ողջոյնի» պահուն բովանդակ Միաբանութիւնը բեմ քարձրանալով ողջագոյրութեամբ, համբուրելով անոնց նորածն մակատն ու աջը: Նոյնը ըրին դպիրներ եւ ժողովուրդ Պատարագի աւարտին, եկեղեցիին դասին մէջ:

ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԹԵՄԷՆ

Այսու ուրախութեամբ կը յայտնենք թէ Աւստրալիոյ եկեղեցիներու Խորհուրդը, իր ընդհանուր ժողովը աւարտեց Գշ. 5 Յուլիս 1994ին: Ժողովը տեղի ունեցաւ Աւստրալիոյ Մայրաքաղաք Գանպերայի մէջ, 1-5 Յուլիս 1994ին:

Միջ-եկեղեցական այս ժողովին Աւստրալիոյ Թեմի պատուիրակութիւնը գլխաւորեց Թեմիս Բարեխնամ Առաջնորդ, Գեորգ. Ս. Աղան Ս. Արքեպս. Պալիօգեան. պատուիրակութեան մաս կազմեցին Տիար Աւօ

Վարդանեան, Տիկ. Զարդիկ Վարդանեան եւ Օր. Իգապէլ Սմարեան: Անիւ-ը վերանուանուեցաւ Աւստրալիոյ մէջ եկեղեցիներու Ազգային Խորհուրդ:

Աւստրալիոյ Հռովմէական Կաթոլիկ եկեղեցին յիշեալ Խորհուրդի նոր անդամ դարձաւ:

Ժողովի աւարտին, խորհուրդը Ս. Աղան Ս. Արքեպս. Պալիօգեանը, միաձայնութեամբ Նախագահ ընտրեց երեք տարիներու համար:

5 Յուլիս 1994 Աւստրալիա

ԳԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ
ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ Ն. Զ.--ի

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՆՈՐԸՆԾԱՅԻՑ

ԴԱՆԻԷԼ ՔԶՆՅ. ԳԱՐԱՃԵԱՆ

Ծնած եմ Պուլկարիոյ Փլովտիվ ֆաղաֆը 1958-ին: Հայրս լուսահոգի Յակոբ Արթին Գարանեանը կօշկակար մըն էր. մայրս Նոեմի Պետրոս Գարանեանը դերձակ է եւ այժմ հանգստեան կոչուած է: Յանախած եմ Փլովտիվի Հայոց դպրոցը, որուն նախակրթարանի բաժինը աւարտելէն ետք անցած եմ մասնաւոր երաժշտական արուեստի գիտութեան դպրոց 1972-1977թ: Երկու տարի ծառայած եմ երկրի բանակին իբրեւ զինուոր 1977-1979. ծառայութենէն յետոյ լծուեցայ աշխատանքի իբրեւ երաժիշտ ֆաղաֆային նուագախումբի «Պրաս Պէնտի» մէջ, ուր գործեցի 12 տարի: 1983-ին գտայ կողակիցս Մարիամ Յարութին Մանուկեանը ու Հայաստանեայց Եկեղեցւոյ ծէսին համաձայն պսակուեցայ: Ունինք երկու մանչ զաւակներ, Յակոբ եւ Յարութ: 1991-ին ընդունուեցայ Երուսաղէմի Ժառ. Վարժարանէն ներս իբրեւ ազատ ուսանող: 1992 Դեկտեմբեր 5-ին սարկաւագ, եւ 1994 Օգոստոս 6-ին ֆահանայ ձեռնադրուեցայ ձեռամբ Ամեն. Տէր Թորգոմ Պատրիարք Մանուկեանի:

ԵԶՐԱՍ ՔԶՆՅ. ՊՈԿՏԱՆ

Ծնած եմ Ռումանիա Թըրգու Օզնա ֆաղաֆը 1968 Մայիս 3-ին: Հայրս Լամպրինիւս Պոկտանը ֆաղաֆիս մարզանքի նախարար է. մայրս Ռոտիֆա Պոկտանը մանկավարժ է: Աւարտած եմ ֆաղաֆիս նախակրթական եւ երկրորդական դպրոցի 12 տարիները 1974-1986ին: Երկու տարի ծառայած եմ բանակին 1986-1988թ. 1988-1989 աշխատած եմ իբրեւ բանուոր ֆաղաֆիս աղի հանքային ընկերութեան մէջ: 1989 ընդունուեցայ Էշմիաձինի ճեմարանի մէջ հայերէն լեզու սորվելու համար: 1990 ընդունուեցայ Երուսաղէմի Ժառ. Վարժարանէն ներս իբրեւ մասնաւոր ուսանող: 1992 Դեկտեմբեր 5-ին սարկաւագ, եւ 1994 Օգոստոս 6-ին ֆահանայ ձեռնադրուեցայ ձեռամբ Ամեն. Տէր Թորգոմ Պատրիարք Մանուկեանի: Յուլիս 17-ին 1992 պսակուեցայ ըստ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծէսին, կողակից Ռոզալիա Մաթէին հետ: Բոյր մը ունիմ որ նարտարապետ է շինարարութեան, Փիադրա Նեամց ֆաղաֆին մէջ:

ԶԱՔԱՐԻԱ ՔԶՆՅ. ՍԱՐԻԲԷԿԵԱՆ

Ծնուել եմ 1968 Սեպտեմբերի 27-ին, Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաք Երեւանում: Հայրս Յուրիկ Սարիբէկեանը ատաղձագործ է, մայրս Եւգենիա Սարիբէկեանը Երեւանի պետական քոչկական ինստիտուտի ֆիզիայի ամբիոնի աւագ գիտ-աշխատող է: Ունեմ եղբայր եւ քույր, որոնք ուսանող են Երեւանի Ճարտարագիտական Համալսարանում: 1985-ին աւարտել եմ Երեւանի միջնակարգ դպրոցը եւ ուսումս շարունակել եմ Երեւանի Պոլիտեխնիկական ինստիտուտի մէջ «Տեխնիկական Կիրենոնտիկային» բաժինը, որ աւարտել եմ 1991-ին: Երկու տարի զինուորական ծառայութեան եմ եղել Գեորգիոյ մէջ: Աշխատել եմ «Գթութիւն Հայկական Բարեգործական Միութեան» մէջ: Դասաւանդել եմ Երեւանի եւ Արտաշատի հոգեւոր կիրակնօրեայ դպրոցներում: Ինչպէս նաեւ աշխատել եմ Գանձասար հանդէսի խմբագրութիւնում: 1992-ին ընդունուեցի Երուսաղէմի Ալեքս եւ Մարի Մանուկեան ընծայարանում: 1993 Փետրուար 25-ին սարկաւագ, եւ 1994 Օգոստոս 6-ին ֆահանայ ձեռնադրուեցի, ձեռամբ Ամեն. Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկեանի: Ամուսնացած եմ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծէսին համաձայն: Տիկինս Սիրարփի Սարիբէկեան Հայ Եկեղեցւոյ անդամ է: